

աշիրաթներու զլիսաւորն է, կարող է հանել մինչև քառասուն հազար ձիաւոր . (թէև չափազանցութիւն կ'երևի) : Այս ցեղերը կը կառավարուին աղաներով և Շէյխերով : Կրօնով մասմուսական են ու կը սրտականին Սիւննի ճիւղին : Շէյխերն ալ Սաասաթ Պէրլընճա ճիւղին :

Ասոնք իրականութեան մէջ կիսանկախ դիրք ունին . ձևականութեան համար՝ որոշ քանակութեամբ զօրք կու տան Նիզամիէի համար :

Կը խօսին Քիւրդ լեզուով, կը գրեն արաբական տառերով ու Քիւրդ լեզուով :

Կինը ազատ է Քիւրդ ցեղին մէջ, և երեսով բաց : Ունին նահապետական կեանք . զլիսաւոր դըրճերն են խաշնարածութիւն, երկրագործութիւն նուազ չափով, և ասպատակութիւն, բաց ի սրի : մանր մուշր գրադումները (\*) :

(\*) «Քիւրդիստանը լեռանց շղթաներու շարք մ'է, տարածուած մին միւսի ետևէն, և երբեմն զատուած արգասաւոր դաշտերով, որոնք կ'ոռոգուին գետերէ :

Այս լեռները ընդհանրապէս ծածկուած են անտառներով, ուր կաղնին գլխորդ ունի, և որը այս երկիրներու գլխաւոր հարստութիւնը կը կազմէ : Զմեռը այս լեռներն անգործածելի են առատ ձիւներուն պատճառով որ զանոնք կը ծածկեն :

Երկրագործութիւնը այնտեղ գրեթէ ոչինչ է, և մենք աղոր պատճառը կը գտնենք հետեւեալին մէջ : Ընդհանրապէս այս երկիրները արգասաւոր չեն, շատ տեղեր կան ուր հող կը պակսի մինչև այն աստիճան՝ որ դուք կը տեսնէք գիւղացիները իրենց կունակին տապրակներով հող բարձած՝ եղած տեղերէն կը տանին դնելու մերկ ժայռերու վրայ, այսպէսով ստեղծելու արուեստական դաշտեր և պարտէզներ, ուր երբեմն հեղեղային անձրևը ըջելով կը տանի հողը ցանքսի հետ : Այս դրութիւնը շատ դործածական է Տիարիներու մաս՝ Նեստորական լեռներու մէջ :

Երկրի գլխաւոր բերքերն են, ցորեն, գարի, եգիպտացորեն, ծխախոտ, բրինձ, երբեմն ալ բանջարեղէններ . ընկոյզ, գլխորդ, սէմաք (le semmak), խողով, ինձոր, տանձ, սալոր, դեղձ ևսլին : Այստեղ շատ կը գտնուի մեղր, և մէկ քանի շրջաններու մէջ կը պարապուին շերամաբուծութեամբ :

Բնակիչները գրեթէ իրենց բոլոր հագուստներու համար հիւսուածքները իրենք կը գործեն, ու ասկէ զատ՝ կը շինեն սիրուն գորգեր ու թաղիքներ՝ որ շատ յարգի են :